# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«<u>25»  մարտի</u>  2015 թվական  N 27–Ա**

**ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 216 (ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՎԵՑ) ԱՆՁԱՆՑ  ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի ղեկավարին են դիմել սոցիալապես անապահով թվով 216 (երկու հարյուր տասնվեց) անձիք՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, սոցիալապես անապահով քաղաքացիների դիմումների համաձայն համայնքի ավագանու <<Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի>> կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ եզրակացությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թվով 216 (երկու հարյուր տասնվեց)  անձանց կանխիկ տրամադրել 2.245.000 (երկու միլիոն երկու հարյուր քառասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (15)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ___________________

Գ. Ադամյան ___________________

Ա. Բաղրամյան ___________________

Մ. Գաբոյան ___________________

Ա.Գրիգորյան __________________

Վ.Եդիգարյան __________________

Գ.Թաթարյան __________________

Հ. Խաչատրյան __________________

Տ.Հովհաննիսյան __________________

Վ. Հունանյան __________________

Ն. Մեսրոպյան ___________________

Ռ.Մխիթարյան ___________________

Վ.Շիրինյան __________________

Մ. Սահակյան ___________________

Տ. Փանոսյան ___________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«25» մարտի 2015 թ.**